

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն N°)

Կ Ա Ր Գ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԵԼՅԱԼ ՕԺԱՆԴԱԿՄԱՆ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ

Ընդհանուր դրույթներ

ՀԱԱՀ վարչական անձնակազմի հիմնական գործառույթներից է ուսանողներին օժանդակումը և ուղղորդումը:

Վարչական անձնակազմի կողմից ուսանողների օժանդակումը և ուղղորդումը վերաբերում է կրթական գործընթացին և ուսանողական կյանքին, մասնավորապես՝

1. Սոցիալական օժանդակում,
2. Նյութական օժանդակում,
3. Ապահովումը հանրակացարանով,
4. Աջակցությունը ուսումնական գործընթացում:

Նպատակները և խնդիրները

Վարչական կազմի կողմից ուսանողներին հավելյալ օժանդակման և ուղղորդման նպատակներն են՝

1. Ուսանողների սոցիալական խնդիրների բացահայտում և սոցիալական օժանդակում,
2. Ուսանողական կյանքի ուսումնասիրում, կարիքների բացահայտում և ուղղորդում,
3. Ուսանողների մոտ ստեղծագործական հմտությունների զարգացում,
4. Ուսանողների արտալսարանային կյանքի կազմակերպում և օժանդակում:

Կատարվող աշխատանքների ուղղվածությունները

1. Ուսանողական ձայնի ուսումնասիրում և ուսանողական կյանքի բարելավում,
2. Ուսանողների ստեղծագործական կյանքի ապահովում,
3. Ուսանողների արտալսարանային կյանքի ապահովում,
4. Ուսանողության շրջանում միջոցառումների կազմակերպում,
5. Ուսանողների սոցիալական պաշտպանության կազմակերպում և ապահովում,
6. Ուսանողության շրջանում տեղեկատվության ապահովման համակարգի զարգացում,
7. Ցածր կուրսերի ուսանողների ուսումնական գործընթացին հարմարվելու աշխատանքների կազմակերպում,
8. Առաջադեմ ուսանողների խրախուսման համակարգի զարգացում (պարզևատրումներ, շրջափոխման համակարգ և այլն):
9. Հաշմանդամություն ունեցող ուսանողների սոցիալական ներառմանն ուղղված խնդիրների բացահայտում և առաջարկությունների մշակում (ըստ անհրաժեշտության):